ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. ***ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-1/:***

   Աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետը ֆինանսական բաժնի պետի հանձնարարությամբ

   ա/ Ժամանակին և պատշաճ որակով ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում է համապատասխան փաստաթղթերը:

   բ/ Մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին:

   գ/ Օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի, գույքահարկի հավաքագրմանը, տեղական տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձման աշխատանքները:

   դ/ Իրականացնում սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

   Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

   -միջնակարգ կրթություն

   -սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

2. ***ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-1/:***

   Աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջին կարգի մասնագետը ֆինանսական բաժնի պետի հանձնարարությամբ

   ա/ Ժամանակին և պատշաճ որակով ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում է համապատասխան փաստաթղթերը:

   բ/ Մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման և հողի հարկի գանձման աշխատանքներին:

   գ/ Աշխատակազմի քարտուղարի և /կամ/ բաժնի պետի հանձնարարությամբ աջակցում է զորակոչի, զորահավաքների, ուսումնավարժական հավաքների աշխատանքներին և քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը:

   դ/ Աշխատակազմի քարտուղարի և /կամ/ բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բնակչության, հատկապես երիտասարդության ռազմա-հայրենասիրական դաստիարակությանը:

   ե/ Իրականացնում սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

   Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

   -միջնակարգ կրթություն

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները կկայանա 2013թվականի ապրիլի 11-ին, ծածկագիր 3.2-1-ը ժամը 12:00-ին, ծածկագիր 3.1-1-ը ժամը 14:00-ին Մրգաշատի գյուղապետարանի շենքում:
Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

Դիմում մրցույթային հանձնաժողովի անունը /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/:

Տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները, բնօրինակների հետ միասին:

Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
-հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
-արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականին պատճենները,
-մեկ լուսանկար 3x4 չափսի
-անձնագրի պատճենը.
Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունները ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղապետարան /հեռ. 093-06-06-04/: ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ վարչություն /հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71, /հեռ՝ 0237 2-76-49, 2-07-70/:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10-ից 16-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է սույն թվականի մարտի 26-ը, ժամը 18:00-ն: